

ԴԱՐՁՎԱԾՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
Ս.ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ՊԱՏՄԱԿԵՊԵՐՈՒՄ

Դարձվածը՝ լեզվաբանական նոր գրականության մեջ դարձվածային միավորը (ԴՄ), որպես լեզվական առանձին իմաստակիր միավոր, հատուկ է թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքին. այն հանդես է գալիս խոսքի բոլոր ոճերում, հատկապես՝ ժողովրդախոսակցական բառապաշարում:

Դարձվածը (ԴՄ-ն) երկու կամ ավելի բառերից կազմված այնպիսի կայուն, պատրաստի և վերարտադրելի բառակապակցություն է, որի բաղադրիչները վերաիմաստավորված են, այսինքն՝ դարձվածի բաղադրիչներից յուրաքանչյուրն այդ կապակցության մեջ չի պահպանում իր բառային, բառարանային բուն իմաստը և ձեռք է բերում նոր նշանակություն¹:

Դարձվածին հատուկ է փոխաբերական - այլաբանական իմաստ: Դարձվածները խոսքը ոճավորելու անփոխարինելի լեզվական կառույցներ են. դրանք ոչ միայն պատկերավոր կերպով ոճավորում են խոսքը, այլև խոսքին տալիս են գեղագիտական արժեք ու երանգ: ԴՄ-ների միջոցով խոսողն, անշուշտ, իր անհատական վերաբերմունքն է դրսևորում որևէ անհատի, երևույթի, դեպքի, իրողության վերաբերյալ²:

ԴՄ-ները իմաստավորվել են ժողովրդի դարավոր խոսքով, դարձել են պատկերավոր ու կուռ արտահայտություններ, ահա թե ինչու են դրանք հանդես գալիս կյանքի բոլոր բնագավառներում և ինչու են դարձել թե՛ բանաստեղծների և թե՛ արձակագիրների խոսքի անկապտելի մասը: Դժվար է ցույց տալ մի գրողի, որ օգտվելիս եղած չլինի խոսքը ոճավորող այս անփոխարինելի միջոցներից, քանի որ ամեն ազգի դարձվածը տվյալ լեզվի աղն ու համեմունքն է՝ այդ լեզուն կրող ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունը: ԴՄ-ները գործածության տարբեր ոլորտներ ունեն: Ինչպես լեզվի բառապաշարը, այնպես էլ դարձվածները հիմնականում տեղաբաշխվում են երեք շերտերի մեջ՝ գրական, ժողովրդախոսակցական և բարբառային:

Դարձվածների մեծ մասը առաջանում է ժողովրդախոսակցական լեզվում ու բարբառներում, ապա նրանց զգալի մասը, գրողների ու անհատների

¹ Տես Խ. Բաղիկյան, Դարձվածային ոճաբանություն, Ե., 2000, էջ 10 և Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե., 2003, էջ 181:

² Տես Խ. Բաղիկյան, նշվ. աշխ. էջ 15

կողմից մշակվելով, աստիճանաբար դառնում է համագործածական ու անցնում գրական լեզվին: Այս ճանապարհով են գրական լեզվին անցել ու լայն տարածում գտել հազարավոր դարձվածներ, որոնք մեր հին, նոր և ժամանակակից գրողների կողմից վերամշակվել են, բերվել են գրական տեսքի, հաճախ էլ նոր իմաստներ են ձեռք բերել: Գործածելով ժողովրդական ու բարբառային դարձվածները՝ գրողները ավելի հարազատ են մնում ժողովրդական լեզվամտածողությանը՝ իրենց խոսքը դարձնելով ավելի դիպուկ, պատկերավոր ու արտահայտիչ: Դրանց միջոցով գրողները ստեղծում են ժամանակի կոլորիտ, անհատականացնում են իրենց գրական հերոսներին՝ ընդգծելով նրանց սոցիալական ծագումը, միջավայրը, կրթական մակարդակը, մասնագիտությունը, աշխարհայացքը, հոգեբանությունը և այլ գործոններ:

Այժմ տեսնենք, թե դարձվածային այս հարուստ համակարգից ինչպես է օգտվել մեր արձակի մշանավոր ներկայացուցիչ Սերո Խանգադյանը իր պատմավեպերում («Թագուհին հայոց»-ԹՀ, «Մխիթար Սպարապետ»-ՄՍ, «Խոսե՛ք, Հայաստանի՛ լեռներ»-ԽՀԼ, «Շուշի»-Շ):

Հայտնի է, որ ժողովրդախոսակցական դարձվածային համակարգում մեծ տեղ են գրավում տվյալ ժողովրդի շրջապատում ապրող կենդանիների ու թռչունների անվանումներով կազմված դարձվածները: Նման դարձվածներով ժողովուրդը կենդանիներին բնորոշ հատկանիշներով բնութագրում է մարդուն ու նրա արարքները: Ս. Խանգադյանի պատմավեպերում հաճախ ենք հանդիպում կենդանիների անուններով կազմված դարձվածներին: Այսպես՝ «Շուշի» շնից, երկուսը՝ մի տնից» (ԹՀ, 266) դարձվածով արծակագիրը բնութագրում է վատ, խարդախ, նեղ մարդկանց, որոնք միմյանց լավ են հասկանում: Սրան հոմանիշ է «Շուշի շան թաթ չի ծամի (կծի)» դարձվածը: «Խոսե՛ք, Հայաստանի՛ լեռներ» պատմավեպում թուրքական իրականության խառնակությունը ցույց տալու համար հեղինակը գործածել է «Շուշի տերը չի ճանաչում» (ԽՀԼ, 485) դարձվածը:

«Շան քիթը մսի հոտ չախտի գցել» (ԹՀ, 98) խորիմաստ դարձվածի միջոցով Խանգադյանի հերոսներից մեկը չի ցանկանում իր գաղտնի մտադրությունները ի հայտ բերել՝ դիմացինին ստիպելով դեռ հույսեր փայփայել:

«Մխիթար Սպարապետ» վեպում գրողը գործածում է «Պառավ շանը քուչի-քուչի չեն անի» ժողովրդի մեջ շատ տարածված դարձվածը:

Եսային երեք արծաթ մեկնեց Մարտիրոսին:

- Վերցրու՛, մեզ համար գոճի մորթի՛ր:

Մարտիրոսը քորեց ծոծրակը.

-Ախր, Եսայի՛ ջան, բա քեզանից...

-Պառավ շանը քուչի-քուչի չեն անի, վերցրու՝,- շտապեց եսային: -Դու չունես, գիտեմ, իսկ էգուց քու տերը գոճու համար զավակդ կտանի...

Անխելը, հիմար, տգետ մարդուն բնութագրելու համար ժողովուրդը հարմար է գտել օգտագործել էշ բառը և այդ կենդանուն բնորոշ հատկանիշներ: Խանգադյանը գործածել է «էշի մահատակ կղառմանը» (ԽՅԼ, 27) և «Ավանակի վերջը գայլի փորումն է» (ԽՅԼ, 61) դարձվածները. դրանցով բնութագրում է այն միամիտ հայերին, որոնք հավատում էին թուրքերի սուտ խոստումներին: Ժողովրդախոսակցական դարձվածներում քիչ չեն մաս մարդկային տարբեր հարաբերություններում, մարդու հոգեվիճակի, կյանքի ու կենցաղի հիման վրա ստեղծված ԴՄ-ները: Բերենք մի քանի օրինակներ՝ «Հոնքը շինելու տեղը աչք չթափենք» (ՍՍ, 132) և «Պետք է կշռադատել իրավիճակը, որպեսզի ունենես շինելու տեղ աչքներս չհանենք» (Շ, 198):

Պատմավեպերում հանդիպում են մաև «Գոռգոռալով կտուրը մոխիր չեք գցի» (ՍՍ, 301) - գործը (չ) հաջողեցնել, «Տեսնենք ում մայրը տղա կբերի» (ԹԶ, 363) – ում գործը կհաջողվի, ով կհաղթի, «Մինչ աղը հասնի, մատաղը կսպառվի» (ԽՅԼ, 157) –մինչ օգնությունը հասնի ամեն ինչ կավարտվի, «Ջուր չեն ասել, թե ճիպտոդ քլիցդ կտրի՛ր, հարուստ տնից բերած հարսը մեջ ուտելու, հեռու շուռ տալու սովոր կլինի» (ՍՍ, 180) – իր աստիճանին համապատասխան ընտանիքից աղջիկ ուզել և այլն:

Արդեն ասվեց, որ յուրաքանչյուր ԴՄ-ի հատուկ է պատկերավոր մտածողությունը, իսկ պատկերավորության դրսևորման լավագույն ռճական միջոց հանդես է գալիս փոխաբերությունը: Փոխաբերությունը ամենից առաջ նպաստում է խոսքի պատկերավորությանը. այն ավելի տպավորիչ ու տեսանելի է դարձնում խոսքը: Յուրաքանչյուր դարձվածային միավորի համար խիստ պարտադիր է և՛ պատկերավորությունը, և՛ փոխաբերությունը: Փոխաբերության շնորհիվ ժողովուրդը իր ասելիքը ավելի պատկերավոր ու խորիմաստ է դարձնում. դրանով աշխարհի իրերն ու երևույթները ներկայացվում են ոչ իրենց սովորական հատկանիշներով, այլ՝ այլաբանորեն՝ դրանց հաղորդելով նոր երանգներ. ավելին՝ եթե դարձվածի կազմիչները վերախմաստավորվում են, ապա ամբողջ դարձվածը հաճախ ավելի է վերախմաստավորվում:

Ս. Խանգադյանի պատմավեպերում ավելի շատ հանդիպում են փոխաբերական իմաստ ունեցող դարձվածները: Այսպես՝ «Թագուհին հայոց» պատմավեպում հանդիպում է «Օձ կա լեզվիդ տակ» ԴՄ-ն, որով հեղինակը շեշտում, ընդգծում է մի չար բան ասելու, բայց ասելիքը չարտահայտելու, թաքցնելու հանգամանքը: Եվ գրողը փոխարենը այսքան երկար-բարակ բացատրի, գործածել է այս ԴՄ-ն և խոսքը դարձրել շատ պատկերավոր և դիպուկ:

Մեկ այլ դարձվածում՝ «Ականջիդ օղ արա ասածներս» (ՄՍ, 145), ոչ թե խոսքը ականջի օղի մասին է, այլ ասածները իբրև խրատ ընդունել, միշտ ղեկավարվել այդ խրատներով: Կամ՝ «Մասնատված ջուրը շուտ է ցամաքում, որքան էլ գետը վարար լինի» (ՄՍ, 304) ՂԱ-ն, որը «Գեղ կանգնի, գերան կկոտրի» ՂԱ-ին հոմանիշ է, ժողովրդին միասնության կոչ է անում: Այսպիսի բազմաթիվ օրինակներ կան պատմավեպերում՝ «Շան քիթը մսի հոտ չպիտի զգել» (ԹՅ, 98), «Մարդ նույնիսկ իրավունք չունի սեփական բերանում սեփական մտքերը ծամել» (ԹՅ, 223), «Եթե մեկն ինձ ասեղով ծակի, ես նրա սիրտը մախաթ կխրեմ» (ՄՍ, 65), «Ձորը դատարկ, աղվեսը խան» (ՄՍ, 561): Շատ պատկերավոր է հատկապես վերջինս, որը նշանակում է, թե քանի որ վկա չկա, ապա կարող է գլուխ գովալ, հոխորտալ, գոռգանալ, պարծենալ: «Կուտը բկին կմնա» դարձվածով էլ հեղինակը նշում է, որ ոչ մեկը և ոչ մի գործ անպատիժ չի մնա. հերոսը չի մարսի իր արածը: «Թևը կոտրած կռուկ» դարձվածով հեղինակը ցույց է տալիս հերոսի հոգեկան տառապանքը, մեծ վիշտը: Բերված բոլոր օրինակներում էլ և ընդհանրապես բոլոր դարձվածներում խիստ ակնառու է մի կարևոր հանգամանք. քիչ բառերով ավելի շատ և խորիմաստ մտքեր արտահայտել. հենց դրանում է դարձվածի ու նրա ազդեցության ուժը:

Համեմատությունը դարձվածի արտահայտչական միջոցներից մեկն է, որի հիմքում ընկած է մի առարկայի ու նրա հատկանիշի կամ գործողության ու նրա հատկանիշի հարաբերությունը մեկ ուրիշ առարկայի հատկանիշի, գործողության կամ ընդհանուր հատկանիշների հետ: Համեմատական դարձվածների միջոցով ավելի ցայտուն ու արտահայտիչ է դառնում առարկայի կամ երևույթի հատկանիշը: Այսպես՝ իշխանություն ունեցող կնոջ հոգին համեմատվում է օծի հետ («Ամնատչելի է իշխանություն ունեցող կնոջ հոգին. նրանից պետք է հեռու լինես, ինչպես օծից» ԹՅ, 356): Մի այլ տեղ անպատված կինը համեմատվում է տափաստանի վագրի հետ («Անպատված կինն ավելի ահարկու է լինում, քան տափաստանի վագրը» ՄՍ, 93):

Գրողը ողբում է Հայաստանի բախտը, քանի որ այն քարի չափ էլ բախտ չունի («Արևդ սիրեմ, Հայաստա՛ն, բախտդ բուռ-բուռ է, քարդ՝ հեղեղ-հեղեղ» Շ, 28):

Պարադոքսը՝ որպես ոճական հետաքրքիր հնար, նույնպես հատուկ է դարձվածներին: Այն խոսքին տալիս է կենդանություն և արտահայտչականություն: Արտաքուստ թողնելով տարօրինակ, հակասական տպավորություն՝ պարադոքսի միջոցով դարձվածը ճշմարիտ միտքն արտահայտում է անսովոր ձևով: Պարադոքսալ դարձվածի լավագույն օրինակներ են «Ճիշտ են ասել, թե

ուխտի պարը կամրջի վրա է բռնում» (ԽՉԼ, 473), «Մեղըը շան մորթու տկի մեջ» (Շ, 362) ԴՄ-ները:

Խանգաղյանը հաճախ է դիմում օքսիմորոն դարձվածներին, որոնք պարադոքսի մի տարատեսակ են. կազմվում են հակիմաստ բառերի զուգորդությամբ: Այդ դարձվածները կազմվում են արտաքուստ անհամատեղելի, տրամագծորեն հակադիր իմաստ ունեցող բառերի զուգորդումից: Ս. Խանգաղյանի պատմավեպերում հանդիպող օքսիմորոնի լավագույն օրինակ է հետևյալ դարձվածը՝ «Իսկ դու բավական է անվերջ արյուն-արցունք երգես, անդանակ մորթես» (ՄՍ, 233):

Չափազանցությունը՝ որպես ռճական դարձույթ մույնպես հատուկ է դարձվածներին. դրա միջոցով ժողովուրդն աշխատում է ավելի ընդգծված ձևով արտահայտել իր ասելիքը, գույները խտացված ձևով ներկայացնել: Խանգաղյանը «Թագուհին հայոց» վեպում ցեղապետի վախճ ցույց տալու համար գործածել է «Լեզիդ բերանի՞դ հասավ» դարձվածը: Այս դարձվածը ավելի է սաստկացնում վախի զգացողությունը: «Մխիթար Սպարապետ» վեպում «Շահ Թահմազը մկան ծակը հազար թումանով է խնդրում» դարձվածով էլ ցույց է տալիս շահի սաստիկ վախկոտ լինելը:

Այսպիսով, ինչպես տեսանք, Ս. Խանգաղյանի պատմավեպերում գործածված դարձվածները խոսքը ռճավորելու, հեղինակի և հերոսների վերաբերմունքն ու զգացմունքներն արտահայտելու անփոխարինելի միջոցներ են: